մեալք ի պալատ թագաւորին թէ Ի դէմ թագաւորին ելանեմք. եւ մարդ յղեալ առ թագաւորն թէ Ելցէ յերեսս մեր արքայ եւ խօսեսցուք ընդ նա՝ տիւան առնելով մեզ, եւ բան ունիմք ասելու նորա, եւ ընդ ինքն բան չունիմք. եւ այլ բազում բանս։ Եւ մօտակայքն, որ ի վեր ասացաւ, չթողէին՝ զայս ասելով թագաւորին թէ Զքեզ կ'ուզեն, մի՛ ցուցաներ զքեզ ծառայիցն։ Եւ այլ զօրագլուխ գնացեալ զայս ծանուցին և հաւատարմացուցին զթագաւորն բազում բանիւք եւ երդմամբ թէ Քեզ հետ բան չունիմք եւ այսխ տիւանի արա՛ մեզ եւ մեք արդ ունիմք տալ քեզ։ Եւ որք ի ներս էին, առ թագաւորն մտեալ յաստուստ, և որք ի բանէս ունէին խորհուրդ՝ որ ի ներսն էին, նոքա ևս ասացեալ թագաւորին. Արա, արքա՛յ, տիւան եւ տեսցուք զի՛նչ են բանք եւ խօսք դոցա։ Եւ թագաւորն այսքան բանիւքս հազիւ սրտապնդեալ, ապա տայ պատասխանի թէ Վաղիւն եկէ՛ք և առնեմ տիւան։ Եւ յետ դարձեալ ամբոխն. եւ յայսմ ժամու փոխեցին զյէնկիչէր աղասին եւ եդին զսէյմէնպաշին, եւս զքեհեայէկն՝ ըստ կամաց իւրեանց։ Եւ գնացին ի նոյն տեղի որ ասի Էթմէյտան[1]), զգիշերքս ի բուն անդ վրանօք անցուցեալ։

Եւ առաւօտուս Կիրակի Ի–իս նոյն ամբոխիւն ելեալ գնացին ի պալատն արքունի ի դէմ քեօշկին։ Եւ մարդ երթար ի ներսն և գայր. և թագաւորն կու ելանէ ի դէմ ծառայիցն ի փէնճէրէն և կու խօսի ընդ սոցա. և երթ և եկքն ոչ դադարէին երթալոյ և գալոյ ի ներսն եւ ի դուրսն. եւ ընդ սոցա ի հետ դուրս ելեալ գայ[2]) առ ծառայսն ճօճալով ոմն Ղարա Աբտուլա անուն, ասելով զօրացն ամբոխին թէ Ոտք ունիք եւ ոչ գլուխ, ո՞ւր է ձեր գլուխն, կամ ի՞նչ է ձեր

1) զյէթմէյտանն. 2) գալ.